



«Այբ» ավագ դպրոց

ՀԱՅՈՑ ԼԵՃՈՒ ԵՎ ԼԵՉՎԱՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Քննաշրջան՝ 2022թ., ապրիլ
Տևողություն՝ 1 ժամ 15 րոպե

«Այբ» ավագ դպրոց

ԳՃԱԿՈՂ

ՈՒՇԱԴԻՐ ԿԱՐԴԱԼ ԱՅՍ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ

Բոլոր պատասխանները գրել այս քննաթերթիկի մեջ՝ համապատասխան տեղերում:
Գրել մուգ կապույտ կամ սև գրիչով:
Քննության վերջում բոլոր թղթերը հավաքել և հանձնել մեկ տրցակով:

Այս փաստաթուղթը բաղկացած է 7 տպագիր և 1 դատարկ էջերից:

Հայոց լեզու

1. Անհրաժեշտ տեղում լրացրո՛ւ բաց թողած տառերը և երկինջունները:

Հին Հունաստանում ապրում էր Սիզիփոս անունով մի եսամոլ խաբեբա, որն իր **ճարակույթամբ** **անբավ** ունեցվածք էր կուտակել: Երբ մահվան դժխեմ աստվածը եկավ նրա ետևից, այդ հանդուգնը **շղթայեց** նրան և նետեց կիսամութ նկուղ: Իրեն անպարտելի կարծելով՝ Սիզիփոսն անդադար գլուխ էր գովում, թե ջախջախել ու գահընկեց է արել մահին, ուստի և քամահրանքով ծաղրում էր բոլորին: Մի օր էլ վերջապես շանթարձակ Չևսը գտավ **նրան** և տարավ ստորգետնյա խավարչտին թագավորությունը: Խորամանկն այստեղ էլ իրեն չկորցրեց, ասես վաղօրոք ամեն բան մտածել էր: Խնդրեց վերադառնալ, իր բնօրրանում առատ զոհեր մատուցել աստվածներին և շուտափույթ ետ գալ. երդվեց, որ **սրբորեն** կպահի խոստումը: **Ոսկեծույլ** քանդակներով լի իր շքեղ պալատը հասնելուն **պես** ամբարտավանը ճոխ խրախճանք կազմակերպեց և շարունակեց գվարճանալ: **Չայրացրեց** նա ահեղ աստվածներին, և նրանք ինքնահավան երդմնազանցին պատժելու անխախտ որոշում կայացրին:

Այժմ նա մի վիթխարի քարաբեկոր է գլորում սարնիվեր: Երբ թվում է, **թե** ուր որ է տեղ կհասցնի, քարը դորդյունով ցած է գլորվում՝ նրա ջանքերը դարձնելով ապարդյուն: Այստեղից է առաջացել, **անշուշտ**, «սիզիփոսյան աշխատանք» արտահայտությունը:

5 միավոր

2. Տեքստից դո՛ւրս գրիր տրված բառերի հոմանիշները: Յուրաքանչյուրի համար գրի՛ր նաև մեկ հականիշ:

Անգութ -	դժխեմ, բարեգութ
հաստատուն -	անխախտ, երեքուն
անօգուտ -	ապարդյուն, արդյունավետ
ահռելի -	վիթխարի, փոքր

2 միավոր

3. Տեքստից դո՛ւրս գրիր տրված կաղապարներին համապատասխան երկուական բառ:

Արմատ+հողակապ+արմատ – կիսամուխ, շուտափույթ

արմատ+արմատ+վերջածանց – բնօրրան, վաղօրոք

արմատ+վերջածանց – շքեղ, սրբորեն

նախածանց+արմատ – անբավ, անխախտ

նախածանց+արմատ+վերջածանց - անպարտելի, ապարդյուն

2,5 միավոր

4. Տեքստում գտի՛ր 2 բարդ բառ, որոնցից մեկն ունի *ածականով* արտահայտված արմատ, իսկ մյուսը՝ *դերանունով*: Դո՛ւրս գրիր այդ բառերը և ընդգծի՛ր արմատները:

վեհաշուք, էլամուլ

0,5 միավոր

5. Տեքստից դո՛ւրս գրիր 1 սուկածանցավոր բայ և կազմի՛ր այդ բայի ենթադրական եղանակի ապառնի, սահմանական եղանակի վաղակատար անցյալ ժամանակածևերը (բայերը գործածի՛ր եզակի թվով, 1-ին դեմքով, դրական և ժխտական խոնարհումով):

Սուկածանցավոր բայ գտնել // հասնել

ենթադրական ապառնի կգտնեմ, չեմ գտնի // կհասնեմ, չեմ հասնի

վաղակատար անցյալ գտել էի, չէի գտել // հասել էի, չէի հասել

1,5 միավոր

6. Որոշի՛ր տեքստում ընդգծված բառերի (8 բառ) խոսքիմասային պատկանելությունը և գրի՛ր դրանք ներքևում տրված համապատասխան տողում: Լրացրո՛ւ փակագծերում նշված հատկանիշները, անհրաժեշտության դեպքում նշի՛ր նախադասության մեջ շարահյուսական պաշտոնը:

Գոյական(հոլովը, հոլովումը) **ճարպկությունը** - գործիական հոլով, ա ներքին հոլովում, ձևի պարագա

ածական(տեսակը, կազմությունը) **ոսկեծուլի** - հարաբերական, բարդ, որոշիչ

դերանուն(տեսակը, հոլովը) **նրան** - անձնական, հայցական հոլով, ուղիղ խնդիր

բայ(եղանակը, ժամանակաձևը, կազմությունը) **զայրացրեց** - սահմանական եղանակ, անցյալ կատարյալ, պատճառական, ստորոգյալ

մակբայ(տեսակը, կազմությունը) **սրբորեն** - ձևի մակբայ, ածանցավոր, ձևի պարագա

կապ(տեսակը) **պես** - հետադրություն

շաղկապ(տեսակը) **թե** - ստորադասական

վերաբերական(տեսակը) **անշուշտ** - հաստատական

2 միավոր

7. ա. Շարունակի՛ր միտքն այնպես, որ նախադասությունը լինի

ա/ բարդ համադասական՝

Սիզիփոսը խնդրեց վերադառնալ, բայց ետ գալու խոստումն անամոթաբար դրժեց:

բ/ բարդ ստորադասական՝

Սիզիփոսը խնդրեց վերադառնալ, որ առատ զոհեր մատուցի աստվածներին:

բ. Կազմի՛ր բարդ ստորադասական նախադասություն՝ անհրաժեշտ փոփոխությունների ենթարկելով տրված բառերը և ճիշտ դասավորելով: Շաղկապն ի՛նքդ ավելացրու:

Խելքի բերել, Սիզիփոս, խաբեբա, աստվածներ, պատժել, խստորեն, նա, վերջապես:

Աստվածները խստորեն պատժեցին խաբեբա Սիզիփոսին, որպեսզի վերջապես խելքի բերեն նրան:

1,5 միավոր

8. Կետադրի՛ր տեքստը:

Կոմիտասի հոմորով համեմված կյանքի մասին շատերն են վկայում իրականում՝ նա ուրախ կենսախինդ մարդ էր: Նրա աշակերտներից մեկը՝ Մելքոն Քրիշչյանը հիշում ու պատմում է մի դեպք հետաքրքիր ու զավեշտալի: Ասում է ինքը երկար ու խիտ մազեր ուներ ինչը զայրացնում էր Կոմիտասին: Վերջինս շարունակ դիտողություն էր անում կեսկատակ-կեսլուրջ ասելով

Եթե բաշդ չկտրես ինձ հետ գործ կունենաս:

Եվ քանի որ Կոմիտասը ճաղատ էր աշակերտն անկաշկանդ կատակում էր

Չայր սուրբ դա չունևորի նախանձ է ուրիշ ոչինչ:

Կոմիտասի՝ հոմորով համեմված կյանքի մասին շատերն են վկայում. իրականում՝ նա ուրախ, կենսախինդ մարդ էր: Նրա աշակերտներից մեկը՝ Մելքոն Քրիշչյանը, հիշում ու պատմում է մի դեպք՝ հետաքրքիր ու զավեշտալի: Ասում է՝ ինքը երկար ու խիտ մազեր ուներ, ինչը զայրացնում էր Կոմիտասին: Վերջինս շարունակ դիտողություն էր անում՝ կեսկատակ-կեսլուրջ ասելով.

-Եթե բաշդ չկտրես, ինձ հետ գործ կունենաս:

Եվ քանի որ Կոմիտասը ճաղատ էր, աշակերտն անկաշկանդ կատակում էր.

-Չայր սուրբ, դա չունևորի նախանձ է, ուրիշ ոչինչ:

3 միավոր

9. Գտի՛ր և ուղղի՛ր սխալները այն նախադասություններում, որտեղ դրանք առկա են (բառագործածության, խնդրառության, համաձայնության):

ա. Շատ եմ ուզում, որ միշտ կողքիս լինես:

բ. Գլխավոր հարցը վերաբերում էր երկրի անկախությանը:

գ. Անշուշտ, առանց հայրենիքի հեշտ չէ ապրելը:

դ. Գյուղացիների մի մասը միացավ արշավախմբին:

ե. Տատիս օրհնությունը միշտ ինձ հետ է:

2 միավոր

Լեզվամտածողություն

1. Ինչպիսի՞ն է վերաբերմունքդ Սիզիփոսի հանդեպ. հնարավո՞ր է արդյոք արդարացնել նրան: Տեսակետդ արտահայտի՛ր 3 բարդ նախադասությամբ:

3 միավոր

2. Ինչպե՞ս կվարվեին աստվածները Սիզիփոսի հետ, եթե նա զոջար ու ներում խնդրեր: Մտքերդ շարադրի՛ր 1 պարզ ընդարձակ և 3 բարդ նախադասությամբ:

2 միավոր

3. Քառյակ և քառատող բառերով կազմի՛ր մեկական նախադասություն:

2 միավոր

4. **Գլորվել** և **մոլթ** բառերը գործածի՛ր նախադասություններում ուղիղ և փոխաբերական իմաստներով:

Ուղիղ _____

Փոխաբերական _____

Ուղիղ _____

Փոխաբերական _____

2 միավոր

5. **Գլուխ** և **խելք** բառերից յուրաքանչյուրով գրի՛ր 2-ական դարձվածք և դրանցից 2-ով կազմի՛ր նախադասություններ:

Գլուխ տանել, գլուխ ջարդել, խելքը հացի հետ ուտել, խելքը թռցնել:

2 միավոր

6. Բառաշարքում ընդգծի՛ր **համանունները** և դրանցից մեկը 2 տարբեր իմաստներով գործածի՛ր նախադասություններում:

Մարդ, երկինք, այր, սյուն, շահ, ծով:

1 միավոր

ԴԱՏԱՐԿ ԷԶ